

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՏ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ
(ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)*

Ավետիք Հարությունյան, Սիրանուշ Պետիկյան

Իշխանությունների տարանջատման սկզբունքը, որպես ժողովրդավարական ու իրավական պետությանը ներհատուկ հատկանիշ, սահմանադրական արժեքանության դիրքերից քննության առարկա դարձնելու նպատակով առաջին հերթին պետք է պարզել, թե իշխանության ճյուղերից յուրաքանչյուրն ինչպե՞ս է կազմավորվում, ի՞նչ գործուն մեխանիզմներ են առկա նրանց միջև իշխանությունը զսպելու և հակակշռելու համար, ինչպես նաև որքանո՞վ է այն ներդաշնակ ժողովրդաիշխանության սկզբունքին:

Իշխանությունների տարանջատումը և դրանց ներդաշնակ գործակցության ապահովումն անխուսափելի անհրաժեշտություն են, և այն պետք է իրականացվի «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» եռամիասնության համակարգային ներդաշնակության ապահովման, յուրաքանչյուր սահմանադրական ինստիտուտի համար գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների օպտիմալ հաշվեկշռի ամրագրման, վերջինիս միջոցով դինամիկայում սահմանադրական հավասարակշռության երաշխավորված պաշտպանման, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքների անվերապահորեն պահպանման ու սահմանադրորեն ապահովման շրջանակներում[1]:

Իշխանությունների տարանջատումը որպես սահմանադրական արժեք հանդիսանում է իշխանության իրականացման անբակտելի հիմքն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետությունում, ինչպիսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն է (ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 1):

ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա»: Մի փոքր պատմական ակնարկ կատարելով՝ հարկ է նկատել, որ ԼՂՀ-ում իշխանությունների տարանջատման սկզբունքի գաղափարը և գործառությունը սկիզբ է առնում դեռևս ԼՂՀ կազմավորման առաջին իսկ տարիներից: Այսպես՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածում ամրագրված է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանությունն արտահայտվում է իր ամբողջ տարածքում օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն իշխանության ինքնուրույն իրականացման ձևով՝ ի շահ հանրապետությունում ապրող բոլոր ազգերի»: Իսկ նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդն է, իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջաններում՝ Գերագույն խորհրդի նախագահությունը»: Այստեղից տրամաբանորեն հետևում է, որ հիշյալ օրեն-

* Հոդվածն ընդունվել է 27.02.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ իրավագիտության ամբիոնը:

քի ընդունումից հետո իշխանությունն իրականացվում էր եռաթև համակարգով, որոնց մեջ գերակայողը օրենսդիր մարմինն էր, քանի որ երկիրն ընտրել էր կառավարման խորհրդարանական հանրապետության մոդելը[2], սակայն վերջինս էլ երկար կյանք չի ունեցել. ԼՂՀ գերագույն խորհրդի թիվ Թ.Ն-0105-1 առ 21.12.1994թ. որոշմամբ «ԼՂՀ-ում մտցվել է կառավարման նախագահական ինստիտուտ»[3], որին անմիջականորեն նույն օրը հետևել է «ԼՂՀ Նախագահի մասին», «ԼՂՀ կառավարության մասին» և «ԼՂՀ խորհրդարանի մասին» ԼՂՀ օրենքների ընդունումը [4]: Ինչ վերաբերում է դատական իշխանությանը, ապա 1996թ. մայիսի 15-ին ընդունվել է «ԼՂՀ դատական իշխանության մասին» ԼՂՀ օրենքը:

Իշխանությունների տարանջատման սկզբունքն առավել էական նշանակություն է ծեռք բերում նախագահական հանրապետություններում, որովհետև հենց կառավարման այս ձևի դեպքում է առավել ընդգծելի դառնում այդ սկզբունքի անհրաժեշտությունը: Այսպես՝ որպես կառավարման դասական նախագահական երկիր ԱՄՆ-ն իր Սահմանադրության մեջ այդ սկզբունքը համալրեց «գալունների և հակակշիռների» ազդեցիկ համակարգով, ինչը հնարավորություն տվեց ոչ միայն տարանջատելու երեք իշխանությունները, այլև արդյունավետորեն հավասարակշռելու դրանք[5]: Եթե օրենսդիր և դատական իշխանությունների տեղի և դերի կապակցությամբ որևէ վիճահարույց հարց չկա, ապա նույնը չենք կարող ասել գործադիր իշխանության մասին, քանի որ այստեղ խոսքը վերաբերում է Նախագահի ինստիտուտին: Եվ առաջին հարցը, որին ուզում ենք անդրադառնալ իշխանությունների տարանջատման սկզբունքի շրջանակներում, Նախագահի տեղի և դերի, ինչպես նաև իշխանության մյուս թևերի հետ նրա հարաբերակցության մասին հարցն է: Այս հարցի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ հաճախ կարծիքներ են արտահայտվում Նախագահի՝ չորրորդ իշխանություն կազմելու մասին[6]: Սակայն առավել հաճախ Նախագահին ներկայացնում են որպես գործադիր իշխանության գլուխ: Նախագահի՝ գործադիր իշխանությունը գլխավորելու իրավակարգավորման արմատները ձգվում են դեպի 1994թ., երբ ստեղծվեց ԼՂՀ Նախագահի ինստիտուտը և որին հաջորդեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը[7]: Հիշյալ օրենքի 1-ին հոդվածում ամրագրված է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը հանդիսանում է Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը և **գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը** (ընդգծումը համահեղ. է)»: Հիշյալ հոդվածը 1996թ. սեպտեմբերի 28-ին լրացվել է հետևյալ բովանդակությամբ դրույթով՝ «ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը», որն էլ հետագայում իր ուրույն տեղն է գտել ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի 2-րդ մասում: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «ԼՂՀ Նախագահը **ղեկավարում է ԼՂՀ կառավարության գործունեությունը** (ընդգծումը համահեղ. է), կարող է նախագահել կառավարության նիստերում»: Հարկ է նկատել, որ «ԼՂՀ կառավարության մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում էր, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունն **ապահովում է գործադիր իշխանության իրականացումը** (ընդգծումը համահեղ. է) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում»: Այստեղ մի կարևոր հանգամանքի վրա պետք է ուշադրություն դարձնել. եթե Նախագահը գլխավորում է գործադիր իշխանությունը և ղեկավարում կառավարության գործունեությունը, ապա կառավարությունն ապահովում է գործադիր իշխանության իրականացումը, այսինքն՝ Նախագահն ինքն անձամբ չէր իրականացնում, այլ իր կողմից ձևավորված կառավարության միջոցով: Այստեղից էլ գալիս ենք այն հետևության, որ մինչև ԼՂՀ Սահմանադրության ընդունումը երկիրը որդեգրել էր կառավարման

նախագահական մոդելը, որին հաջորդել է ներկայիս կառավարման կիսանախագահական ձևը:

Այսպիսով՝ պետական իշխանության համակարգում Նախագահի տեղի և դերի մասին հարցին ավելի կոնկրետ պատասխան է տալիս ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի 2-րդ մասի դրույթը, ըստ որի՝ «Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը»: Իրավական այս նորմի տրամաբանական շարունակությունը կարելի է տեսնել Սահմանադրության 67 հոդվածում ամրագրված երդման մեջ, որում «Նախագահը երդվում է անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները ...»: Սակայն 1994թ. «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածում նշված էր, որ «Նախագահը երդվում է լինել Հանրապետության Սահմանադրության ու օրենքների պաշտպանության, ... երաշխավորը»[8]: Այս հիմաստով կարծում ենք, որ հետընթաց քայլ է կատարվել և Նախագահին չի վերապահվել Սահմանադրության երաշխավորը լինելու պարտականությունը, իսկ Սահմանադրության հետևելը չի կարելի նույնացնել Սահմանադրության երաշխավորը լինելու հետ, քանի որ դրանք տարբեր իրավական հասկացություններ են. հետևելու դեպքում դա կատարվում է որպես Նախագահ, անձնապես, իսկ երաշխավորը լինելու պարագայում Նախագահի կողմից երաշխավորվում է Սահմանադրության կիրառումն ու հետևելն ամբողջ բնակչության և պետական մարմինների համար, ինչպես նաև Սահմանադրության նորմերի իրացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 80 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ռուսաստանի Դաշնության Նախագահը Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորն է: ...»[9]:

Նախագահի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու իրավակարգավորման շրջանակներում բաց է մնում այն հարցը, թե ինչ եղանակով, մեխանիզմով կամ ինստիտուտի միջոցով է Սահմանադրությամբ Նախագահին վերապահված այդ լիազորություններն իրականացվում:

ԼՂՀ Նախագահն իշխանության թևերի բնականոն գործունեությունն ապահովում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, այդ թվում իր կողմից կամ առաջարկությամբ գործադիր և դատական իշխանության մարմիններում նշանակումներ կատարելով: Այդ լիազորություններից յուրաքանչյուրի առանձին վերլուծությունից պարզ է դառնում «բնականոն գործունեության ապահովում» երևույթի կենսունակությունը: Կարծում ենք, որ Սահմանադրությամբ Նախագահին վերապահված այդ մեծ «առաքելության» իրականացման համար անհրաժեշտ են ավելի կոնկրետ ու հստակ մեխանիզմներ:

Չուտ Սահմանադրության մակարդակով այս կարևորագույն դրույթն ամրագրված է, սակայն գործնականորեն չկա որևէ կոնկրետ մարմին, որի գործունեության առանցքը կլինի երկրի Նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու նրա պարտականության ապահովումը, իսկ Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչության գործառույթների մեջ այդպիսին չի մտնում, այլ հիմնականում Նախագահի գործունեության իրավական ապահովումը, որը չենք կարող որակել որպես Սահմանադրության հետևում, քանի որ դա ընդամենն ամբողջի մի մասն է:

Հաշվի առնելով վերոնշարադրյալի կարևորությունը և այն, որ ԼՂՀ Սահմանադրության այս դրույթն ինչ-որ չափով կանխորոշում է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման իրական սահմանադրական արժեք լինելու հանգամանքը՝ առա-

ջարկվում է ԼՂՀ Նախագահի աշխատակազմում կամ Նախագահին առընթեր ստեղծել մասնագիտացված մարմին, որի հիմնական գործունեությունը կհանդիսանա Նախագահի կողմից Սահմանադրության հետևման և իշխանության երեք թևերի բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ գիտականորեն հիմնավորված և արհեստավարժորեն իրականացվելիք գործողությունների հիմնավորվածությունը ԼՂՀ Նախագահին ներկայացնելն ու դրանց ընթացքին հետևելը: Նման մարմնի առկայությունը Նախագահին հնարավորություն կտա նաև Սահմանադրության պահպանման շրջանակներում իրականացնելու երկրում սահմանադրականության մշտադիտարկում:

Նախագահի կողմից իշխանության ճյուղերի բնականոն գործունեության ապահովմանն այսքան մեծ ուշադրություն հատկացնելը պայմանավորում ենք նրանով, որ շատ դեպքերում հենց երկրի Նախագահից է կախված իշխանության եռաթև ճյուղավորումների միջև բաժանման ու հավասարակշման արդյունավետությունը:

Այժմ անդրադառնանք ԼՂՀ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների փոխգործակցության հարցին: Համաձայն ԼՂՀ Սահմանադրության՝ օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը (գլուխ 4): Համաձայն Ազգային ժողովի կանոնակարգ ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի՝ Ազգային ժողովը կազմված է 33 պատգամավորից, որոնք ընտրվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով (ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 4 և 77):

Պատիվ ընտրական իրավունքի իրացումը կախված է ԼՂՀ Սահմանադրության 78 հոդվածով ամրագրված որոշակի չափանիշներից, մասնավորապես՝ պատգամավոր կարող է ընտրվել 23 տարին լրացած, վերջին 5 տարում ԼՂՀ քաղաքացի հանդիսացող, վերջին 5 տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Սահմանադրության 90 հոդվածի ուժով՝ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է Հանրապետության Նախագահին, պատգամավորներին և Կառավարությանը:

Երկրի Սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված լիազորությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- **ԼՂՀ Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովի կողմից իրացվող լիազորություններ**, մասնավորապես՝ վարչապետի թեկնածության կապակցությամբ համաձայնություն տալը, համաներում հայտարարելը, ԼՂՀ միջազգային պայմանագրերը վավերացնելը, կասեցնելը և դադարեցնելը, պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու որոշում ընդունելը, Գերագույն դատարանի նախագահին և մյուս դատավորներին, գլխավոր դատախազին, վերահսկիչ պալատի նախագահին նշանակելը,

- **ԼՂՀ Կառավարության առաջարկությամբ Ազգային ժողովի կողմից իրացվող լիազորություններ**, մասնավորապես՝ Հանրապետության վարչատարածքային բաժանման, վարչատարածքային միավորների անվանումների ու սահմանների սահմանումը, Կառավարության նեկայացմամբ պետական բյուջեի հաստատումը,

- **պետական մարմինների և պաշտոնատար անձանց առաջարկությունից կամ ներկայացումից անկախ Ազգային ժողովի կողմից իրացվող լիազորություններ**՝ զինված ուժերի օգտագործումը, ռազմական և արտակարգ դրությունը դադարեցնելը, մարդու իրավունքների պաշտպանի, արդարադատության խորհրդի երկու իրավաբան անդամների նշանակումը, վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի հաստատումը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Չնայած ԼՂՀ Սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված են լայն լիազորություններ, այնուհանդերձ, դրանք մի կողմից՝ կիրառական բնույթ չունեն, իսկ մյուս կողմից՝ դրանք իրացվում են մի քանի տարին մեկ անգամ: Իրականությունն այն է, որ ԼՂՀ-ում իշխանությունների մեջ առավել բարձր դիրքում գտնվում է ԼՂՀ կառավարությունը, որը տիրապետում է պետության ֆինանսական միջոցներին և իր կազմի մեջ կամ ենթակայության տակ գտնվող գերատեսչությունների միջոցով իրականացնում է պետական քաղաքականություն: ԼՂՀ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական բյուջեի նկատմամբ Ազգային ժողովի իրականացրած վերահսկողությունը հիմնականում կրում է ձևական բնույթ, քանի որ վերահսկողության իրականացման արդյունքում հայտնաբերված թերությունների կամ բացթողումների համար նախատեսված չէ պատասխանատվության հստակ կառուցակարգ:

ԼՂՀ-ում գործադիր իշխանությունն իրականացնում է Կառավարությունը (զլուխ 5): Կառավարության ձևավորման համար ԼՂՀ Նախագահն Ազգային ժողովի համաձայնությանն է ներկայացնում վարչապետի թեկնածությունը, որն անհրաժեշտ պայման է իշխանության տվյալ մարմնի ձևավորման գործընթացում:

Պատգամավորների ընդհանուր թվի ծայնների մեծամասնությամբ Ազգային ժողովի համաձայնությանն արժանացած վարչապետը, Կառավարության անդամները նշանակվում են Նախագահի կողմից, իսկ գործունեության ծրագիրը հավանության է արժանանում Ազգային ժողովի կողմից Սահմանադրությամբ սահմանված ժամկետներում և կարգով (հոդված 100):

Այլ հետևանքներ վրա են հասնում Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածությանը համաձայնություն չտալու կամ Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալու դեպքում:

Հիշյալ հիմքերից մեկի առկայության դեպքում Հանրապետության Նախագահը երկրորդ անգամ է վարչապետի թեկնածությունը ներկայացնում Ազգային ժողովի համաձայնությանը: Համաձայն 100 հոդվածի 1-ին մասի 1.5 կետի՝ Ազգային ժողովը կարող է օգտվել հետևյալ հնարավոր լիազորություններից.

1. վարչապետի թեկնածության առնչությամբ երկու անգամ հայտնում է անհամաձայնություն, կամ

2. համաձայնություն չի տալիս վարչապետի թեկնածությանը, ինչի հետևանքով հավանություն չի տալիս Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին, կամ

3. համաձայնություն չի տալիս Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալուց հետո ներկայացված վարչապետի թեկնածությանը:

Ազգային ժողովի կողմից վերոհիշյալ լիազորություններից մեկի իրացման դեպքում վրա է հասնում հետևյալ հետևանքը. Հանրապետության Նախագահը տասնօրյա ժամկետում նշանակում է վարչապետ և կազմավորում Կառավարություն՝ շրջանցելով Ազգային ժողովին:

Հարկ է նկատել, որ ԼՂՀ Սահմանադրության մեջ նշում չկա այն մասին՝ արդյո՞ք ԼՂՀ Նախագահը վարչապետի թեկնածուին առաջին անգամ ներկայացնելուց հետո պարտավոր է երկրորդ անգամ ներկայացնել այլ թեկնածուի կամ իրավունք ունի առաջարկելու նույն անձին: Ինչպես հետևում է 100 հոդվածի 1-ին մասի 1.4 և 1.5 կետերից, ԼՂՀ Նախագահն իրավունք ունի ներկայացնելու նույն թեկնածուին երկու անգամ կամ

ամեն անգամ նոր թեկնածուի: Սակայն Սահմանադրությունը Նախագահի համար որոշակի սահմանափակում է դրել, որն արտահայտվում է նրանում, որ արգելվում է վարչապետ նշանակել այն անձին, ում թեկնածությունը երկու անգամ մերժվել է Ազգային ժողովի կողմից (հոդված 100, մաս 1-ին, 1.6 կետ):

Զնայած վերոհիշյալին, ոչ նպատակահարմար ենք համարում Ազգային ժողովի կողմից մերժված վարչապետի թեկնածուի կրկնակի ներկայացումը՝ բացառությամբ Ազգային ժողովի հետ լրացուցիչ բանակցությունների անցկացման և նրանց դիրքորոշումների համաձայնեցման դեպքերի: Գտնում ենք, որ վարչապետի նույն թեկնածուին Ազգային ժողովին երկու անգամ ներկայացնելը, որն ինչ-որ տեղ ստիպողական բնույթ է կրում, խախտում է օրենսդիր իշխանության ինքնուրույնությունը, զրկում ընտրության իրավունքից և անհնարին դարձնում կառավարության ձևավորման գործում իրականացնելու այն դերը, որն Ազգային ժողովին վերապահված է ԼՂՀ Սահմանադրությամբ:

Ինչպես բխում է Սահմանադրության 100 հոդվածի 1-ին 1.5 կետից, վարչապետի թեկնածության կրկնակի մերժման մասին Ազգային ժողովի որոշումը ԼՂՀ Նախագահի համար պարտադիր չէ, քանի որ ԼՂՀ Սահմանադրությունը պետության գլխին հնարավորություն է տալիս միակողմանիորեն հաղթահարելու անհամաձայնությունը, ինչի մասին նշված է վերևում և որի արդյունքում Նախագահը նշանակում է վարչապետ և ձևավորում Կառավարություն: Ընդ որում, վարչապետի թեկնածությունը կարող է լինել կամ Ազգային ժողովի կողմից մերժված թեկնածուներից, կամ այն անձը, որի թեկնածությունը նախկինում չէր ներկայացվել Ազգային ժողով:

Մեր կարծիքով՝ Կառավարության ձևավորման տվյալ կարգը խախտում է զսպունների և հակակշիռների մեխանիզմի գործողությունը, չի համապատասխանում ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի ոգուն, համաձայն որի՝ Նախագահն ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, ինչը կարող է նպաստել իշխանության մարմինների միջև անհամաձայնությունների առաջացմանը:

Իշխանության տարբեր թևերի միջև շահերի հավասարակշռության ապահովման համար, ինչպես նաև Նախագահի և Ազգային ժողովի կողմից իրենց վերապահված իրավունքի չարաշահումից խուսափելու նպատակով, նպատակահարմար ենք համարում Սահմանադրության 100 հոդվածի 1-ին մասի 1.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «սույն հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետով սահմանված կարգով Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածության առնչությամբ երկու անգամ համաձայնություն չտալու կամ Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածությանը համաձայնություն չտալուց հետո Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալու կամ Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալուց հետո ներկայացված վարչապետի թեկնածությանը համաձայնություն չտալու դեպքերում Հանրապետության Նախագահը տասնօրյա ժամկետում նշանակում է վարչապետ, կազմավորում Կառավարություն և արձակում Ազգային ժողովը»:

Կառավարությունն Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր գործունեության ծրագիրը՝ դնելով իր վստահության հարցը: Սույն հարցը կարող է դրվել Կառավարության ձևավորումից հետո, կամ նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարումից հետո (Սահմանադրության 89 հոդված), կամ Կառավարության կողմից օրենքի նախագիծն (այդ թվում նաև պետական բյուջեի նախագիծը[10]) Ազգային ժողո-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

վի քննարկմանը ներկայացնելու դեպքում (Սահմանադրության 90 հոդված, մաս 5): Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է նախաձեռնվել Կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծի քննարկման հարցը, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի[1]: Կառավարության անվստահություն հայտնելու որոշման նախագծի ընդունման համար անհրաժեշտ է պատգամավորների ընդհանուր թվի ծայնրի մեծամասնությունը (Սահմանադրության 89 հոդված, մաս 2): Կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չներկայացվելու կամ նման որոշում չընդունվելու դեպքերում Կառավարության գործունեության ծրագիրը համարվում է հավանության արժանացած:

Կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունելուց հետո առաջացող հետևանք է հանդիսանում վարչապետի կողմից Հանրապետության Նախագահին Կառավարության հրաժարականի մասին դիմումի ներկայացումը (Սահմանադրության 89 հոդված, մաս 4): Համանման հետևանքներ են առաջանում Կառավարության կողմից Ազգային ժողով ներկայացված օրենքի նախագծի քննարկման ժամանակ (մանրամասն տես Հավելված 1):

Այստեղ իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպիսի՞ հնարավոր որոշումներ կարող է ընդունել Նախագահը վարչապետի կողմից նման դիմում ստանալուց հետո, մասնավորապես. Նախագահը հայտարարում է Կառավարության հրաժարականի մասին՞, թե կարող է չհամաձայնվել Ազգային ժողովի հետ և արձակել Ազգային ժողովը:

Նշված հարցերի պատասխանը չի բովանդակվում ԼՂՀ Սահմանադրության մեջ: Հաշվի առնելով իշխանության վերոհիշյալ մարմինների ձևավորման կարգը և Նախագահի դերը տվյալ ընթացակարգում՝ նպատակահարմար ենք համարում ԼՂՀ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունվելու դեպքում վարչապետը նույն օրը Հանրապետության Նախագահին դիմում է ներկայացնում Կառավարության հրաժարականի մասին: Նշված դիմումի քննարկումից հետո Հանրապետության Նախագահն իրավունք ունի հայտարարելու Կառավարության հրաժարականի մասին կամ չհամաձայնվելու Ազգային ժողովի որոշման հետ: Եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ անվստահություն է հայտնում Կառավարությանը՝ վերջինիս ծրագրին հավանություն չտալու տեսքով, ապա Նախագահը հայտարարում է Կառավարության հրաժարականի մասին կամ արձակում է Ազգային ժողովը»: Ելնելով վերոհիշյալից՝ անհրաժեշտ է համանման փոփոխություններ կատարել 90 հոդվածի 5-րդ մասում կամ ամրագրել Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ մասին հղում կատարող նորմ:


ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Գ. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 5-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Իրավունք, 2010, էջ 95:
2. Կարծում ենք՝ այս մոդելի ընտրությունը պատահական չէ. այն պայմանավորում ենք նրանով, որ Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ի դեմ սանձազերծած լայնամասշտաբ պատերազմական գործողությունների ժամանակահատվածում պետության հա-

մար կարևոր որոշումների կայացումը պետք է լիներ ոչ թե մեկ անձի, այլ հավաքական կամքի արտահայտություն: Ընդ որում, կառավարման Նախագահական ձևին անցում կատարվել է 1994թ. մայիսի 12-ին հաստատված հրադադարի ռեժիմից հետո՝ 1994թ. դեկտեմբերի 22-ին:

3. Տե՛ս ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը:
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանի Թ.Ն-0089-1 առ 19.03.1998թ. որոշմամբ ԼՂՀ խորհրդարանն անվանակոչվել է «ԼՂՀ Ազգային ժողով»:
5. ՀՀ սահմանադրական իրավունք / պատ. խմբագիր՝ Ն.Այվազյան, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 158-159:
6. Իրավաբանական գրականության մեջ կան կարծիքներ, որ Հանրապետության Նախագահը համարվում է բարձրագույն գործադիր մարմին (տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 5-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Իրավունք, 2010, էջ 93) կամ դասվում են գործադիր իշխանության հատուկ սուբյեկտների շարքին (տե՛ս ՀՀ վարչական իրավունք, ընդ. խմբ. Գ.Դանիելյան, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 181-182):
7. Օրենքն ուժը կորցրած է ձանաչվել ԼՂՀ Սահմանադրության 141 հոդվածի 3-րդ կետով:
8. ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության Նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է»:
9. Конституция Российской Федерации, М., Проспект, 2010, стр.18.
10. Սահմանադրության 105 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «... Բյուջեի հաստատման առնչությամբ Կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը Սահմանադրության 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով Կառավարությանն անվստահություն չի հայտնում, ապա պետական բյուջեն՝ Կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված»:
11. ԼՂՀ Սահմանադրության 97 հոդվածի ուժով Ազգային ժողովը չի կարող օգտվել Կառավարությանն անվստահություն հայտնելու իրավունքից հետևյալ դեպքերում. Կառավարության գործունեության ծրագրին հավանություն տալուց հետո վեց ամսվա ընթացքում, պատերազմի ժամանակ, աղետի դեպքում կամ այլ արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում:

Հավելված 1



ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Իշխանությունների տարանջատումը որպես սահմանադրական արժեք
(Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով)
Ավետիք Հարությունյան, Սիրանուշ Պետիկյան**

Իշխանությունների տարանջատումը որպես սահմանադրական արժեք իր ամրագրումն է ստացել ԼՂՀ Սահմանադրության մեջ: Սահմանադրական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ զսպումների և հակակշիռների մեխանիզմի արդյունավետ գործողության համար անհրաժեշտ է վերացնել օրենսդրության մեջ առկա այն բացերը, որոնք շոշափում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների փոխգործողության հարցերը: Իշխանության տարբեր թևերի միջև շահերի հավասարակշռման «առողջ» գործառնությունն ու ապահովումն անհրաժեշտ է ժողովրդավարական և իրավական պետության կառուցման կառուցման համար:

Բանալի բառեր՝ նախագահ, իշխանությունների տարանջատում, զսպումների և հակակշիռների մեխանիզմ, իշխանությունների բնականոն գործունեության ապահովում

РЕЗЮМЕ

**Разделение властей как конституционная ценность
(на примере Нагорно-Карабахской Республики)
Аветик Арутюнян, Сирануш Петикян**

Разделение властей как конституционная ценность получило закрепление в Конституции НКР. Анализ конституционных норм показал, что для эффективного действия механизма сдержек и противовесов необходимо устранить те существующие в законодательстве пробелы, которые затрагивают вопросы взаимодействия органов законодательной, исполнительной, судебной ветвей власти. «Здоровое» функционирование и обеспечение баланса интересов между органами разных ветвей власти необходимо для построения демократического и правового государства.

Ключевые слова: президент, разделение властей, механизма сдержек и противовесов, обеспечение нормального функционирования властей

SUMMARY

**Separation of Powers as a Constitutional Value
(on the example of the Republic of Nagorno-Karabakh)
Avetik Harutyunyan, Siranush Petikian**

The principle of separation of powers as a constitutional value was enshrined in the NKR Constitution. The analysis of constitutional norms has showed that for the effective operation of "checks and balances" mechanism it is necessary to eliminate the existing gaps in the law that touch upon the issues of the interaction of legislative, executive and judicial branches of power. A "healthy" functioning and maintenance of a balance of interests between the different branches of power is necessary for building a democratic and legal state.

Keywords: President, separation of powers, mechanism of checks and balances, ensuring the normal functioning of the powers